

թէ ինչո՛ւ պարտք համարած էի վճիռներու գործադրու-  
թեան յետաձգումը խնդրել : Այս խորհուրդը դժբաղ-  
քաբար նկատողութեան չէ առնուած : Նոյնպէս Թարսու-  
սէն քաջած էի հեռագիր մը , ստորագրուած նաև Էսաա  
Րէուֆ պէյի կողմէ , խնդրելու համար որ անարգարօ-  
րէն բանտարկուած Հայերու — ինչպէս Քերովմէ էֆէն-  
տիի — քննութիւնը կարենար շարունակուիլ՝ առանց  
յիշեալները բանտին մէջ վար դրուելու :

Չոր վտեմութիւնը հրամայած է ընթացք տալ այս  
խնդրանքին , սակայն այդ հրամանը չէ գործադրուած .  
վասնզի մինչդեռ պատերազմական ստեանի պարտքն  
էր Պաղտատի Չատէի , Պօշնաք Սալիհի , Իհսան Ֆիք-  
րիի և Ատանայի լանոնց գործակիցներուն և Պաղչէի  
Սայիտ աղայի , հաճի Խալիլի և Հասան աղայի , ինչպէս  
նաև Օսմանիէի և Իհսանիէի միեւնոյն դասակարգի  
Ջարդարարներուն քննութիւնները փութացնել և ան-  
յապազ վճիռները գործադրել , և , անգամ մը կարգը  
վերահաստատելէ վերջ , պատժական կամ քաղաքա-  
յին ուրիշ յանցանքներու քննութիւնը թողուլ սովո-  
րական դատարաններու : Պատերազմական Ատեանը ,  
փոխանակ այսպէս վարուելու — ինչ որ իրեն համար  
պարտականութիւն մըն էր — երկու ամսուայ իր գու-  
մարումներու ընթացքին նկրտեցաւ Հայկական ապրս-  
տամբութիւն մը երեւան հանելու : Իր բոլոր գործու-  
նէութիւնը յատկացուց պատժելու խեղճ վերապրող-  
ներ — որոնց միակ ոճիքը այն էր որ իրենց կեանքը  
պաշտպանած էին — , իր որոշումներուն մէջ հիմնուելով  
միմիայն քաղաքային և զինուորական պաշտօնեանե-  
րու յայտարարութեանց և վկայութեանց , ինչպէս նա-  
և Պաղտատի Չատէի նման ոճրագործներու . բոլորը հե-  
ղինակ և կազմակերպիչ խռովութեանց :

Վտտահէլի աղբիւրէ մը տեղեկացած եմ որ , Հա-